ԼԱՐԻՍԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

2007թ. հունվարի 1-ից Եվրոպական հանձնաժողովը Հայաստանում հանձն է առել իրականացնելու Եվրոպական հարևանության քաղաքականությունը: Եվրոպական հարևանության քաղաքականությունը Եվրոպական հանձնաժողովի նախաձեռնությունն է՝ իրականացնելու աջակցության ծրագրեր Եվրամիության հետ արտաքին ընդհանուր սահմաններ ունեցող երկրների հետ, ինչպես նաև այն երկրների հետ, որոնք սահմանակից են Եվրամիությանն անդամակցելու համար դիմած թեկնածու երկրներին: Գիտակցելով, որ աշխարհագրական մոտիկությունը կարող է հետաքրքրությունների մերձեցում առաջացնել և բարձրացնել ընդհանուր խնդիրների վրա համատեղ աշխատելու կարևորությունը, Եվրամիությունը ցանկանում է մշակել հարևանների հետ քաղաքականության նոր շրջանակ՝ հիմք ընդունելով այնպիսի համընդհանուր արժեքներ, ինչպիսիք են՝ ազատությունը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը, օրենքի գերակայությունը, շուկայական տնտեսության անցման հիմնահարցերը և կայուն զարգացումը: Միևնույն ժամանակ այն նպատակ ունի առկա կայուն հարաբերությունների հիման վրա խորացնել քաղաքական ու տնտեսական ինտեգրացումը: Ինչպես նշում է Եվրոպական հանձնաժողովի արտաքին հարաբերությունների գլխավոր տնօրինության և Եվրոպական հարևանության քաղաքականության հանձնակատար Ռ.Ֆերերո Վալդները. «Մենք վստահ ենք, որ բարգավաճում ենք, եթե մեր հարևաններն էլ են բարգավաճում: Եվրամիության արտաքին սահմանների տարբեր կողմերում ապրող մարդկանց միջև նոր անջրպետներ չպետք է լինեն»[1]:

Այդ նպատակով 2003թ. մարտի 11-ին Եվրոպական հանձնաժողովը հաստատեց հաջորդ տասնամյակի համար հարաբերությունների նոր շրջանակ[2] Ռուսաստանի, Արևմտյան ԱՊՀ երկրների (Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) և Միջերկրական ծովի հարավային տարածաշրջանի երկրների (Ալժիր, Թունիս, Եգիպտոս, Լիբանան, Պաղեստին, Իսրայել, Հորդանան, Մարոկկո, Լիբիա) հետ, որոնք ներկայումս չունեն անդամակցության հեռանկար, սակայն ունեն ընդհանուր սահմաններ Եվրամիության հետ: Վերոնշյալ երկրները մինչ Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը արդեն իսկ Եվրամիության աջակցության մի շարք ծրագրերի շահառուներ են. մասնավորապես ԱՊՀ երկրներին օժանդակություն է ցուցաբերվել Tacis[3] ծրագրի շրջանակներում 1999-2006թթ. ընկած ժամանակահատվածում, իսկ Միջերկրական ծովի տարածաշրջանի երկրներին՝ MEDA[4] աջակցության գործիքի միջոցով 1995-2006թթ. ընկած ժամանակահատվածում:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը, ըստ էության, չի նախատեսում աջակցության տրամադրման անկյունաքարային փոփոխություններ, այլ ենթադրում է առավել նպատակաուղղված ու արդյունավետ աջակցության միջոցով ստեղծված իրավիճակի, առկա կարողությունների և հնարավոր բարեփոխումների առավել կատարյալ համադրում:

Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացման հիմնական ֆինանսական գործիքը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքն է, որը հաստատվել

---

[1] www. newneighbors.am, Լուրեր և վերլուծություններ, 15.02.2006:
[2] European Commission (2003), Communication on Wider Europe – Neighbourhood: A New Framework for Relations with Our Eastern and Southern Neighbours, COM (2003) 104 final.
[3] Technical Assistance to Commonwealth of Independent States. Տեխնիկական աջակցություն ԱՊՀ երկրներին:
[4] Mediterrianean Area, Միջերկրական ծովի տարածաշրջան:

է Եվրոպական հանձնաժողովի կողմից 2004թ. սեպտեմբերին[1] և նախատեսված է իրականացնելու 2007-2013թթ. ընթացքում: Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքը նախատեսում է այնպիսի հիմնախնդիրների լուծմանն ուղղված բարեփոխումներ, ինչպիսիք են՝ քաղաքական երկխոսությունն ու բարեփոխումները, Եվրամիության ներքին շուկային մասնակցության և առևտրի աշխուժացման նպատակով իրականացվող օրենսդրական համապատասխանեցումը, ինստիտուցիոնալ բարեփոխումները և այլն՝ այս ամենի համար 2007-2013թթ. հատկացնելով 11.181 մլն եվրո: Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի իրականացման ընթացքում վերոնշյալ նպատակների իրականացման առավել արդյունավետ առաջընթաց ապահովելու համար Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում իրականացվում են ֆինանսական աջակցության հետևյալ ծրագրերը՝

1. ազգային ծրագրեր, որոնք նախատեսված են մեկ գործընկեր երկրի համար, և Եվրամիության որևէ անդամ երկրի մասնակցությունը հավանական բնույթ է կրում,
2. բազմերկրյա ծրագրեր, որոնք նախատեսված են երկու կամ ավելի գործընկեր երկրների համար և ուղղված են տարածաշրջանային զարգացմանը, միաժամանակ Եվրամիության որևէ անդամ երկրի մասնակցությունը նույնպես հավանական բնույթ է կրում,
3. անդրսահմանային համագործակցության ծրագրեր, որոնք նախատեսված են ընդհանուր սահմաններ ունեցող երկու և ավելի գործընկեր երկրների ու Եվրամիության մեկ և ավելի անդամ երկրների համար:

Վերոնշյալ աջակցության ծրագրերից առավել կարևոր ռազմավարական նշանակություն ունեցողը Անդրսահմանային համագործակցության ծրագիրն է: Անդրսահմանային համագործակցություն ասելով նկատի ենք ունենում համագործակցություն սահմանամերձ տարածաշրջանների միջև՝ խթանելու տարածաշրջանի միասնական զարգացումը: Եվրոպական Միությունը Անդրսահմանային համագործակցության ծրագրի շրջանակներում ցանկանում է աջակցել ընդլայնված համագործակցությանը և առաջընթաց տնտեսական ինտեգրմանը Եվրամիության անդամ երկրների և սահմանամերձ գործընկեր երկրների միջև, ինչպես նաև ապահովել կայուն և ինտեգրված տարածաշրջանային զարգացում Եվրամիության սահմանների երկայնքով: Միաժամանակ Անդրսահմանային համագործակցության շրջանակներում իրականացվող գործողությունները նպաստում են տարածաշրջանում բարիդրացիական հարաբերությունների ամրապնդմանը:

Ընդհանուր առմամբ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում իրականացվող Անդրսահմանային համագործակցության ծրագրի աշխարհագրական տիրույթի ներքո առանձնացնում ենք բազմաթիվ տարածաշրջաններ, որոնք տարանջատվում են ըստ՝

1. Եվրամիության անդամ երկրի կամ երկրների և գործընկեր երկրի կամ երկրների միջև առկա ցամաքային սահմանի,
2. Եվրամիության անդամ երկրի կամ երկրների և գործընկեր երկրի կամ երկրների միջև առկա ծովային սահմանի,
3. Եվրամիության անդամ երկրի կամ երկրների և գործընկեր երկրի կամ երկրների տարածաշրջանում գտնվող ծովային ավազանի:

Եվրամիության անդամ երկրների և Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ընդգրկված երկրների ծովային ավազանը ներառում է Միջերկրական ծովի և Սև ծովի տարածաշրջանները: Այս հոդվածի խնդրո առարկան՝ Անդրսահմանային համագործակցության սևծովյան ավազանը ընդգրկում է 834,719 քառ. կմ տարածք՝ 74.2 մլն բնակչությամբ, իսկ տարածաշրջանը ներառում է ծովի հարակից տարածաշրջանի երկրները. մասնավորապես,

[1] European Commission (2004), Proposal for a Regulation Laying Down General Provisions Establishing a European Neighbourhood and Partnership Instrument (ENPI).

արևմուտքից ընդգրկում է Եվրամիության երեք անդամ երկրներ՝ Ռումինիան, Բուլղարիան և Հունաստանը, հարավից ներառում է Թուրքիան, արևելքից ընդգրկում է Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, իսկ հյուսիսային սահմանում ներառում է Ուկրաինան, Ռուսաստանի Դաշնությունը և Մոլդովան:

Եվրոպական անձնաժողովը այս տարածաշրջանին օժանդակություն ցուցաբերելիս հաշվի է առել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, մշակութային, բնակլիմայական և այլ պայմանները: Մասնավորապես, Եվրոպական հարևանության քաղաքականության հանձնակատար Բ.Ֆերերո Վալդները նշում է. «Սև ծովի ափին տեղակայված երկրները հարուստ են իրենց մշակութային և պատմական փորձով, գեղեցիկ ու հարուստ բնությամբ ու ազգային արժեքներով: Բայց ներկայումս երկրները ի վիճակի չեն միայնակ լուծելու երկրների առկա հիմնախնդիրները: Ուստի, այդ համատեքստում ու նաև Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում Եվրամիությունը աջակցություն է ցուցաբերում այս տարածաշրջանին՝ ուշադրությունը բևեռելով այնպիսի հիմնախնդիրներին, ինչպիսիք են՝ տրանսպորտը, ձկնաբուծությունը, բնապահպանությունը և տեղական իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցությունը»[1]:

Սակայն բացի վերոնշյալից, Եվրոպական հանձնաժողովի կողմից սահմանվել են համագործակցության գերակա ոլորտները 2007-2013 թթ. համար, որոնք են[2]՝

1. աջակցել տնտեսական և սոցիալական զարգացմանը սահմանամերձ տարածաշրջաններում՝ որպես հիմնական բաղադրիչ,
2. աջակցել ընդհանուր հիմնախնդիրներին,
3. ապահովել արդյունավետ և անվտանգ սահմաններ,
4. աջակցել միջանձնային համագործակցությանը:

Աղյուսակ 1

Անդրսահմանային համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի գերակա ուղղությունները

Աջակցություն կայուն տնտեսական և սոցիալական զարգացմանը սահմանամերձ տարածաշրջաններում	Աջակցություն ընդհանուր հիմնախնդիրներին	Աջակցություն արդյունավետ և անվտանգ սահմանների ապահովմանը	Աջակցություն միջանձնային համագործակցությանը
• վարչարարական կարողությունների ստեղծում և բարեփոխումներ • տեղական և տարածաշրջանային զարգացում • գյուղական զարգացում • անդրսահմանային տուրիզմ • տարածաշրջանային զարգացում • ՓՄՁ և բիզնեսի զարգացում • աջակցություն առևտրին և ներդրումներին • անդրսահմանային աշխատանքի շուկայի զարգացում	• բնապահպանություն • թափոնների կառավարում • անդրսահմանային բնապահպանական հիմնախնդիրներ • բնական ռեսուրսների կառավարում • ազգային հարստության պահպանում • նախապատրաստվածություն արտակարգ իրավիճակներին • առողջապահություն և սոցիալական զարգացում • փոխանցումներ	• սահմանային կառավարման գործողությունների և մաքսային գործընթացների կատարելագործում • առևտրի և սահմանային փոխադրումների թափանցիկության և դրա արդյունավետության բարձրացում • մարդկանց ազատ տեղաշարժի պայմանների բարելավում • սահմանային	• աջակցություն քաղաքացիական հասարակության և տեղական իշխանություններին • աջակցություն բարեփոխումներին • կառավարում • կրթական և մշակութային փորձի փոխանակում • սոցիալական ոլորտի համագործակցություն • սահմանամերձ շրջանների սոցիալ-մշակութային ինտեգրում

[1] Սև ծովյան համագործակցության նախարարական հանդիպում, 2008թ. փետրվարի 14, Կիև:

[2] 2007-2013թթ. Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո Անդրսահմանային համագործակցություն, գիտաժողով, 2006թ. մարտի 7-8, Հռոմ, գիտաժողովի զեկույց:

Աջակցություն կայուն տնտեսական և սոցիալական զարգացմանը սահմանամերձ տարածաշրջաններում	Աջակցություն ընդհանուր հիմնախնդիրներին	Աջակցություն արդյունավետ և անվտանգ սահմանների ապահովմանը	Աջակցություն միջանձնային համագործակցությանը
• համագործակցություն տրանսպորտի և էներգետիկայի բնագավառներում	համաճարակների կանխարգելում • կազմակերպված հանցավորության, անօրինական միգրացիայի և մարդկանց առևտրի դեմ պայքար	հսկողության ենթակառուցվածքների և սարքավորումների կատարելագործում	

Ուստի, այս հիմնական գերակայություններն են դրված Անդրսահմանային համագործակցության Սև ծովի տարածաշրջանի երկրների համագործակցության հիմքում:

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում իրականացվող Անդրսահմանային համագործակցության ծրագրի հիմնական գերակայությունների սահմանման արդյունքում ընտրվում են տվյալ երկրի համար նախատեսված ծրագրեր, որոնց իրականացման ժամանակ հաշվի են առնվում երկրի տնտեսական զարգացման մակարդակը, աշխարհագրական դիրքը, երկրների միջև առկա տնտեսական հարաբերությունները և այլն: Փաստորեն, համագործակցային ոլորտի նախանշումից հետո էական է դառնում նաև գործընկեր երկրի ընտրությունը, որը տարածաշրջանում լինի առավել հարմար և ապահովի ծրագրի արդյունավետություն: Հայաստանի պարագայում տարածաշրջանում այդ գործընկերը միանշանակ Վրաստանն է, քանզի Թուրքիայի և Ադրբեջանի հետ չունենք տնտեսական հարաբերություններ:

Հայաստանը և Վրաստանը, լինելով սահմանակից երկրներ, իրենց կրոնով, պատմամշակութային անցյալով, բնակլիմայական պայմաններով և այլ ազգային արժեքներով բավականին մոտ են միմյանց: Միաժամանակ Վրաստանի հարավային տարածաշրջանները բնակեցված են մեծաքանակ հայերով: Հայաստանը և Վրաստանը քաղաքական ասպեկտում ունեն կայուն բարիդրացիական հարաբերություններ. հայ-վրացական սահմանը բաց է և գործում է առանց արտոնագրային համակարգի:

Տնտեսական ասպեկտում հայ-վրացական հարաբերությունները նույնպես կայացած են: Հայ-վրացական տնտեսական համագործակցությունը կայուն բնույթ է կրում և երկկողմանի շահավետ է: Մասնավորապես, Վրաստանը ներկայումս Հայաստանի միակ ելքն է դեպի Սև ծով, ինչը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար, ինչպես նաև Վրաստանի սահմանով Հայաստան է փոխադրվում ռուսական գազը: Վրաստանը Հայաստանի հետ համագործակցության ասպարեզում նույնպես շահագրգռված է, քանզի Ռուսաստանի, ինչպես նաև Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հետ քաղաքական հակամարտությունները էական ազդեցություն ունեցան տնտեսության վրա, և Հայաստանը ներկայումս կայուն հարևան է տարածաշրջանում:

Ե՛վ Հայաստանը, և՛ Վրաստանը նախկին Խորհրդային Միության երկրներ են, որոնք ներկայումս գտնվում են անցումային փուլում. երկու երկրներում էլ առաջընթաց տեմպերով տեղի են ունենում գլոբալ տնտեսական բարեփոխումներ, անցում շուկայական տնտեսությանը և եվրաինտեգրմանը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի և Վրաստանի տնտեսությունների ընդհանուր պատկերը հետևյալն է.

Աղյուսակ 2

Հայաստանի և Վրաստանի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ընդհանուր պատկերը 2006թ.

2006թ.	Հայաստան	Վրաստան
ՀՆԱ, մլն ԱՄՆ դոլար	6.387	7.849
ՀՆԱ-ի աճ, %	13.4	9.4
1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար	1981	1779
Սղաճ, %	5.2	8.8
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ, մլն ԱՄՆ դոլար	887	1190
Առևտրային հաշվեկշիռ, մլն ԱՄՆ դոլար	-242	-2688.2

Աղբյուրները.

1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր. վերանայված տարբերակ, Երևան 2007թ., դեկտեմբեր:
2. ՀՀ 2008-2010թթ. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր:
3. www.mfa-gov.ge

Փաստորեն, վերոնշյալ տվյալները ակնհայտորեն խոսում են այն մասին, որ Հայաստանի և Վրաստանի տնտեսությունների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները բավականին մոտ են միմյանց: Սակայն, այդուհանդերձ, կարելի է նկատել այն հանգամանքը, որ Հայաստանի տնտեսության մեջ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները առավել կայուն են. սղաճի տեմպը ավելի ցածր է, ինչպես նաև փոքր է առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը:

Առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի առկայությունը Հայաստանի և Վրաստանի տնտեսությունների հիմնական տնտեսական ցուցանիշների ցանկում խոսում է այն մասին, որ երկրների տնտեսությունները դեռևս չեն ձգտում դասվել զարգացած երկրների շարքին, սակայն կարևոր հանգամանք է այն, որ արտաքին առևտուր են իրականացնում այլ երկրների, ինչպես նաև միմյանց հետ: Այս համատեքստում երկկողմանի շահավետ առևտրային հարաբերությունները խթանում են երկու երկրների տնտեսական բարեկեցությունը:

Սակայն պարզվում է, որ վերոնշյալ շահավետ համագործակցությունը ոչ թե երկկողմ է, այլ եռակողմ, քանզի Եվրամիությունը նույնպես շահագրգռված է Հայաստանի և Վրաստանի հարաբերությունների կայունության հարցում, որովհետև Եվրամիության արտաքին հարաբերությունների քաղաքական հեռանկարը նախատեսում է Եվրամիության գործընկեր երկրների միջև հակամարտությունների իսպառ վերացում և բարեկամական հարաբերությունների ձևավորում: Միևնույն ժամանակ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո Անդրսահմանային համագործակցության շրջանակներում ծրագրերի իրականացումը նախատեսում է ծրագրի համատեղ իրականացում միաժամանակ մեկ կամ ավելի գործընկեր երկրներում և Եվրամիության մեկ կամ ավելի անդամ երկրում: Որպես սույն հոդվածի խնդրո առարկա՝ փորձ կարվի ուրվագծել Անդրսահմանային համագործակցության շրջանակներում հայ-վրացական հետագա համագործակցության հիմնական միտումները, քանզի մինչ օրս դեռևս Անդրսահմանային համագործակցության շրջանակներում չեն մեկնարկվել համատեղ ծրագրերը:

Ուստի, կարծում եմ, հարկ է ներկայացնել այս տարածաշրջանում Եվրամիության և այլ դոնոր գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից արդեն իսկ իրականացված ծրագրերը և հետևություններ անել ապագա ծրագրերի իրականացման հիմնական ուղղությունների ու սկզբունքների վերաբերյալ:

Բացի Եվրոպական միությունից, Հարավային Կովկասի տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերել մի շարք այլ դոնոր կազմակերպություններ, մասնավորապես

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման գրասենյակը, Համաշխարհային բանկը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը, շվեյցարական կառավարությունը և այլն:

Հարավկովկասյան տարածաշրջանում ամենալայնածավալ գործունեություն իրականացնող դոնոր կազմակերպությունը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունն է, որի շրջանակներում իրականացվող ծրագրերի հիմնական առաքելությունն է աջակցություն ցուցաբերել առավել կայուն և առաջընթաց շուկայական տնտեսության կողմնորոշում ունեցող տնտեսությանը և բնակչության բարեկեցությանը հետևյալ աջակցության ծրագրերի միջոցով՝

- տնտեսական աճ, որի շրջանակները ներառում են տեխնիկական աջակցություն գյուղատնտեսական քաղաքականությանը, գյուղական վարկեր փոքր ֆերմերներին, բիզնեսի զարգացում, տնտեսության վերակառուցում և մասնավոր ոլորտի զարգացում, միկրովարկավորում, ՓՄՁ, հարկեր, մաքսեր և ֆիսկալ բարեփոխումներ և այլն,
- էներգետիկայի ոլորտ, որը ներառում է ոլորտի վերակառուցմանն ու բարեփոխումներին ուղղված միջոցառումներ և ջրային տնտեսության մեջ որակի բարելավմանն ու կառավարմանն ուղղված միջոցառումներ,
- ժողովրդավարություն և կառավարում, որի ներքո իրականացվում են աջակցություն օրենքի գերակայության հզորացմանը, հակակոռուպցիոն ծրագրեր, դատական համակարգի բարեփոխումներ, տեղական կառավարում, քաղաքական կուսակցություններ և ընտրություններ, անկախ ԶԼՄ-ներ, առավել զարգացած քաղաքացիական հասարակություն և այլն,
- համայնքի զարգացում և առողջապահություն, որը ներառում է առողջապահական համակարգի բարեփոխումները և դրան առընթեր այլ միջոցառումներ,
- միջոլորտային գործունեություններ, այդ թվում՝ ուսուցման ծրագրեր և տարածաշրջանի հասարակական կազմակերպությունների փորձի փոխանակում:

Միաժամանակ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից տրամադրվող օժանդակությունն ունի տվյալ երկրին ուղղված առանձնահատուկ օժանդակության բաղադրիչներ. մասնավորապես, Հայաստանին օժանդակություն է ցուցաբերվել աղետի գոտում նոր բնակարանաշինության գործընթացում, իսկ Վրաստանին՝ հակամարտությունների բացասական հետևանքների մեղմմանն ուղղված գործընթացներում հակամարտություններից տուժած մարզերում: Հարկ է նաև նշել, որ օրինակ, միայն 2002թ. ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից միայն Հայաստանին տրամադրվել է 90 մլն, իսկ Վրաստանին՝ 89 մլն ԱՄՆ դոլարի չափով օժանդակություն[1]:

Հաջորդ դոնոր կազմակերպությունը Համաշխարհային բանկն է, որը օժանդակություն է ցուցաբերում տարածաշրջանում աղքատության կրճատմանը և դյուրացնում է անցումը շուկայական տնտեսության: Աջակցությունը հիմնականում կենտրոնանում է այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են՝ ձեռնարկատիրության զարգացումը, էներգետիկան, ջրային տնտեսությունը, կրթությունը, առողջապահությունը, ագրարային և դատական բարեփոխումները: Միջազգային արժութային հիմնադրամի միջոցները այս տարածաշրջանում հիմնականում ուղղվում են մակրոտնտեսական քաղաքականության աջակցությանը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջոցները՝ վարկավորմանը և էներգետիկայի ոլորտին: Միավորված ազգերի միջազգային մանկական կրթական հիմնադրամը օժանդակություն է ցուցաբերում առողջապահության, կրթության և սոցիալական ոլորտներին, իսկ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման գրասենյակը՝ աղքատության կրճատման, ժողովրդավարության և կառավարման գործընթացներում: Հայաստանին և Վրաստանին օժանդակություն

[1] The South Caucasus Regional Overview and Conflict Assessment, Cornell Caspian Consulting, Swedish International Development Cooperation Agency, Department for Central and Eastern Europe. August 2002.

է ցուցաբերում նաև շվեյցարական կառավարությունը, որի աջակցությունը հիմնականում իրականացվում է հումանիտար օգնության ձևով:

Վերոնշյալ դոնոր կազմակերպությունների գործունեությունների իրականացմանը զուգահեռ Եվրամիությունը նույնպես լայնածավալ միջոցառումներ է իրականացնում Հայաստանում և Լրաստանում: Եվրոպական հանձնաժողովը 1991-2006թթ. ընկած ժամանակահատվածում Tacis ծրագրի շրջանակներում ԱՊՀ երկրներին տրամադրել է տեխնիկական աջակցություն հետևյալ ոլորտներում՝

- աջակցություն ինստիտուցիոնալ, իրավական և վարչական բարեփոխումներին,
- աջակցություն մասնավոր հատվածին և տնտեսական զարգացմանը,
- աջակցություն անցումային շրջանի սոցիալական հետևանքներին,
- ենթակառուցվածքների ցանցի զարգացում,
- շրջակա միջավայրի պաշտպանության խթանում և բնական ռեսուրսների կառավարում,
- ագրարային տնտեսության զարգացում,
- աջակցություն ատոմային անվտանգությանը:

Այդ ժամանակահատվածում Եվրոպական հանձնաժողովը միայն Հայաստանում իրականացրել է թվով 300[1] ծրագրեր, որոնք ուղղված են եղել տնտեսության հիմնական ճյուղերում բարեփոխումների իրականացմանը: Վերոնշյալ ծրագրերը ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված են ստորև բերված աղյուսակում.



Աղբյուրը. ատենախոսության նախագիծ. «Եվրամիության աջակցությունը ՀՀ տնտեսական զարգացման գործում», Լ.Հարությունյան

Գծանկար 2. Tacis ծրագրի շրջանակներում իրականացված ծրագրերի բաշխումը ըստ տնտեսության ճյուղերի:

[1] ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Եվրամիության տեխնիկական օգնության կոորդինացման բաժնի Արտաքին աջակցության տվյալների ինտեգրված շտեմարան, հասանելի է նաև www.mfe.am/tacis կայքում. վերջին թարմացումը՝ 2007թ. փետրվար:

Վերոնշյալ ծրագրերից 139-ը ուղղակիորեն և անուղղակիորեն ուղղված են եղել տարածաշրջանային զարգացմանը կամ համատեղ ձևով իրականացվել են հարավկովկասյան տարածաշրջանի երեք երկրներում: Վերոնշյալ ծրագրերի մեջ առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում TRACECA՝ տրանսպորտային միջանցք Եվրոպա-Կովկաս-Ասիա և INOGATE՝ միջպետական նավթի և գազի փոխադրում դեպի Եվրոպա ծրագրերը: Միաժամանակ բազմաթիվ ծրագրեր են իրականացվել և իրականացվում տրանսպորտի, կրթության, բնապահպանության, հանրային կառավարման, ֆինանսների և այլ ոլորտներում:

Փաստորեն, Եվրամիության կողմից իրականացված տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում արդեն իսկ իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, և 2007թ. մեկնարկած Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքը ևս նախատեսում է այդ և բազմաթիվ այլ ոլորտներին ուղղված աջակցություն:

Անդրսահմանային համագործակցության շրջանակներում դեռևս ծրագրեր չեն իրականացվել, և ծրագրերի որոշակիացումը նախատեսված է միայն 2008թ. ավարտին: Ուստի, հաշվի առնելով անցյալից քաղված դասերը և այն հիմնահարցերը, որ շոշափել ենք սույն հոդվածում, կարծում եմ՝ կարելի է անել որոշ ենթադրություններ՝ կապված հետագա ծրագրերի որոշակիացման հետ:

Հետագա ծրագրերի որոշակիացման և արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է տարանջատել ծրագրերի ընտրության երեք հիմնական սկզբունք՝

1. գործընկեր երկրի ճիշտ ընտրություն,
2. տնտեսության ոլորտի ճիշտ ընտրություն,
3. ծրագրի նպատակահարմարության որոշում:

Գործընկեր երկրի ընտրության հարցում Սևծովյան տարածաշրջանի գործընկեր երկրներից առավել նպատակահարմարը Վրաստանն է, որն արդեն հիմնավորվել է սույն հոդվածում: Սակայն ինչպես արդեն նշվել է, Անդրսահմանային համագործակցության ծրագրերն իրականացվելու են մեկ կամ մի քանի անդամ երկրների և մեկ կամ մի քանի գործընկեր երկրների միջև: Ուստի, Անդրսահմանային համագործակցության շրջանակներում անդամ երկրի հետ հետագա համագործակցության նախանշումը, ըստ էության, պետք է լինի առաջին հերթին անդամ երկրի կամ երկրների նախաձեռնությունը և հետո միայն լինի երկու գործընկեր երկրների համատեղ որոշման արդյունքը:

Անդրսահմանային համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի ճյուղային ընտրության հիմնավորման հարցում նույնպես կարելի է անել որոշ եզրահանգումներ. մասնավորապես արդեն իսկ իրականացված ծրագրերը ընդգրկել են համագործակցության ոլորտների համարյա ողջ տիրույթը, սակայն հիմնական ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում կարելի է իրականացնել մի շարք ենթածրագրեր կամ նմանատիպ ծրագրեր՝ որպես առկա բարեփոխումների շարունակություն: Միաժամանակ անհրաժեշտ է նաև նշել այն հանգամանքը, որ Անդրսահմանային համագործակցության թեմատիկ ոլորտների ցանկում արդյունավետ և անվտանգ սահմանների ապահովմանն ու միջանձնյա հարաբերություններին առնչվող ծրագրերը մեծամասամբ նորարարություն են լինելու Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում:

Անդրսահմանային համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի նպատակայնության հիմնահարցը դուրս է սույն հոդվածի իրավասություններից և ուսումնասիրությունների շրջանակից:

Եվ միևնույն ժամանակ ցանկացած աջակցության ծրագիրը անկախ գործընկեր երկրի ընտրությունից և ճյուղային ուղղվածությունից, միևնույն է, կոչված է խթանելու մեր քաղաքական, տնտեսական ու սոցիալական բարօրությունը: